ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----»---------- 2019թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՐԱԲԿԻՐ-ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0051, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Զարյան փողոց հ.27, պետական գրանցման համարը՝ 264.120.05050):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

2019 թ. _____ «____»
Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԱՐԱԲԿԻՐ-ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշման (2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 267-Ն որոշման խմբագրությամբ) 2-րդ կետի համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանի աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե գանձելու Երևանի քաղաքապետի լիազորությունները փոխանցվել են «Գնումների մասին» օրենքի համաձայն ընտրված կազմակերպությանը՝ Երևանի ենթակայության «Արաբկիր-Սերվիս» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն): Ընկերության եկամուտը ձևավորվել է վերոհիշյալ հավաքագրված գումարներից՝ 10%-ի չափով:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N35-Ն որոշմամբ 2013 թվականի մարտի 19-ի N 622-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ՝ աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե գանձելու Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակվել են Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

Ընկերության 2015-2017թթ. սեփական կապիտալը (զուտ ակտիվները) պակաս է եղել կանոնադրական կապիտալի չափից և, վնասով աշխատելու արդյունքում, բացասական թիվ է կազմել, մասնավորապես՝ 2015թ.՝ -1101.0 հազ. դրամ, 2016թ՝ -1936.0 հազ.դրամ, 2017թ. -814.0 հազ. դրամ , իսկ 2018թ. 9 ամսվա տվյալներով այն կազմել է -2266.0 հազ. դրամ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա անհրաժեշտ է ընդունել որոշում Ընկերության լուծարման մասին:

Ընկերության աշխատողների թվաքանակը ըստ հաստիքացուցակի կազմում է 38 միավոր, այդ թվում՝ 8 միավոր՝ վարչական անձնակազմ՝ 1310.0 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդով (տարեկան՝ 15720.0 հազ.դրամ), 30 միավոր տեսուչներ, որոնց աշխատավարձի ամսական ֆոնդը սահմանվել է հավաքագրված գումարի 8%-ի չափով :

Երևանի քաղաքապետի 2018 թվականի ապրիլի 23-ի N 1514-Ա որոշմամբ հաստատված Ընկերության նախահաշվով եկամուտները նախատեսվել են 40200.0 հազ. դրամ, իսկ աշխատավարձի գծով ծախսը՝ 35677.0 հազ. դրամ կամ ստացված եկամուտի 88.7 %-ը:

Հաշվի առնելով վերոհիշյալը Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից՝ ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԱՐԱԲԿԻՐ-ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԱՐԱԲԿԻՐ-ՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ